ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Հայկ Մխոյան

Բանալի բառեր՝ բուլղարական ուղղափառ եկեղեցի, բուլղարական էկզարխատություն, Օսմանյան կայսրություն, Ռուսաստան, ֆանարիոտ, Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքություն:

Օսմանյան կայսրությունը՝ որպես բազմակրոն երկիր, ուներ բազմաթիվ խնդիրներ, որոնց շարքում 19-րդ դարի երկրորդ կեսին առանձնացավ բուլղարական ինքնուրույն եկեղեցի ունենալու պայքարը: Դրա առանձնահատկությունն այն էր, որ այն մղվում էր ոչ թե Օսմանյան կայսրության, այլ Կ. Պոլսի հունական պատրիարքության դեմ: Վերջինս իրեն համարում էր ուղղափառ քրիստոնյաների միակ ու գերագույն ներկայացուցիչը Օսմանյան կայսրությունում ու չէր ընդունում ինքնուրույնություն ստանալու բուլղարական եկեղեցու ձգտումները: Այս խնդրում կարևորվում էր նաև մեծ տերությունների միջամտությունը հարցի լուծման գործում: Նրանցից յուրաքանչյուրը փորձում էր իր խնդիրները լուծել՝ արծարծելով բուլղարների ազգային հարցը:

Դրությունը բուլղարների համար սրվում էր հունական կողմի հոգևոր և տնտեսական ճնշումներով, այսպես կոչված ֆանարիոտ հոգևորականության [1] կողմից: Հոգևոր աստիճանակարգության բարձրագույն պաշտոնները զբաղեցնում էին հարուստ հունական ընտանիքների զավակները, որոնք բնակվում էին Կ. Պոլսի Ֆանար թաղամասում: Ե՛վ հոգևոր, և՛ քաղաքացիական ֆանարիոտները իրենց վաղուց ու ամուր հիմքերով կապել էին թուրքական ադմինիստրատիվ և դիվանագիտական կապերով: Նրանց էր պատկանում առևտուրը և ծովագնացությունը[2]:

Եկեղեցական ինքնուրույնության համար կազմակերպված պայքարը բուլղարներն սկսեցին Մեծ Տիրնովոյում սկսված իրադարձություններով: Այստեղ լինում էին դեպքեր, երբ արքեպիսկոպոսներ էին նշանակվում փահլևանները: Վերջիններս իրենց գործունեության ընթացքում մեծ գումարներ էին հավաքում ու գնում էին արքեպիսկոպոսի կոչում: Այն բանից հետո, երբ սուլթանը հայտարարեց Թանզիմաթի մասին, հենց նույն տարում՝ 1839 թ., Տիրնովոյի բնակիչները վռնդեցին հույն մետրոպոլիտ–փահլևան Պանարետին ու պահանջեցին Նեոֆիտ Բոզվելիին նշանակել այդ պաշտոնում, սակայն պահանջը չբավարարվեց ու ընտրվեց Նեոֆիտ Վիզանտիոսը[3]: Ուղղափառ եկեղեցու բոլոր գործերը հանձնեցին իրենց նկատմամբ հլու հնազանդ Կ. Պոլսի հունական պատրիարքի տնօրինությանը[4]: Այս ամենը ազդանշան էր բուլղարների համար՝ սկսելու հունական եկեղեցու դեմ լայն արշավ, որը պետք է տաներ բուլղարների անկախացմանը Կ. Պոլսի պատրիարքությունից:

Այսպիսով՝ թուրքական լծի տակ տառապող բուլղար ժողովրդի համար ավելանում էր ևս մեկ խնդիր, որը հանդես էր գալիս հունական բարձրաստիճան հոգևորականության կրոնական ճնշումներով: Պատմաբան Արամ Անտոնյանը, անդրադառնալով նշյալ խնդրին, գրում էր. «Սլավ տարրը սոսկ թուրքական քաղաքական լուծ չէր կրեր, այլ նաև հույներուն մտավոր ու կրոնական լուծը, որը ընդհանրապես առաջինեն ավելի ծանր կճնշեր իրենց վրա: Ֆեների պատրիարքարանը կարգելեր իրենց լեզուն, իրենց եկեղե-

---

* Հոդվածն ընդունվել է 29.01.2016:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

ցական պաշտամունքը, իրենց գրականությունը, մանավանդ պատմությունը, անհամար լավ ձեռագրեր կայրվեին կույր մոլեռանդությամբ մը, ինչ որ Իսլամը չէր ըներ, հույն կրոնավորները կընեին…»[5]:

Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում հույսեր չներշնչեց բուլղարական ազգին Օսմանյան կայսրությունից շուտափույթ ազատագրության համար: Պատերազմը իր հետևից Օսմանյան կայսրության համար բերեց տնտեսական և քաղաքական կախվածություն իր ոչ վաղ անցյալի դաշնակիցներից: Սուլթանական տիրույթներում հաստատվեցին բազմաթիվ արտադրողներ, որոնք իրենց կառավարությունների հովանու ներքո ստանում էին Բարձր դռնից կոնցեսիաներ երկաթգծերի, ճանապարհների կառուցման համար կամ այլ շինարարությունների թույլտվություն:

*Ղրիմի պատերազմից հետո պայքարը էլ ավելի մեծ թափով արտահայտվեց: Դրա պատճառը հատկապես 1856 թ. հրապարակված **Հաթթը հումայուն** էր, որը նոր իրողություններ էր իր հետ բերում ազատագրական պայքարի պատմության մեջ՝ մեծ հույսեր տալով Օսմանյան կայսրության հպատակ ազգերին: Այս փաստաթղթում քրիստոնյաների ու մյուս կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ հատուկ կարգավորումներ կային: Մասնավորապես նշվում էր. «յուրաքանչյուր քրիստոնեական կամ ոչ մուսուլմանական համայնք կոնկրետ ժամանակահատվածում թո՛ղ տվորի, ստուգի՛ իր արտոնություններն ու իրավունքները հարկերից ազատվելու համար և հատուկ խորհուրդներում քննարկի իրենց անհրաժեշտ պատրիարքական կազմակերպությունները, որոնք կհամապատասխանեն ժամանակի ոգուն և լուսավորության ու կրթության աճին» [6]: Սա, փաստորեն, հնարավորություն տվեց բուլղար քաղաքական ու հոգևոր գործիչներին քայլեր ձեռնարկելու սուլթանի տված «արտոնություններից» օգտվելու համար:*

Այս պայքարը ուսումնասիրող բուլղար պատմաբանները, [7] կարծում են, որ խնդիրը առաջացել է նոր բարձրացող երիտասարդ բուլղարական և հունական բուրժուազիայի միջև՝ Բուլղարիայում մշակութային ու տնտեսական կարևոր դիրքեր զբաղեցնելու համար: Կ. Պոլսի պատրիարքությունը սերտ հարաբերությունների մեջ էր թուրքական ֆեոդալական բյուրոկրատիայի հետ և կիսում էր միևնույն ժամանակ համահունական ձգտումները, ստեղծում էր դժվարություններ բուլղարական լուսավորության զարգացման համար: Դա վերաբերում է մասնավորապես դպրոցների բացմանը, գրքերի տպագրմանը և մայրենի լեզվով կրոնական արարողությունների անցկացմանը: Պատրիարքը իրավունք էր ստացել թուրքական իշխանությունների առջև հանդես գալու որպես քրիստոնյաների միակ ներկայացուցիչը, թվական տվյալներ հաղորդելու բնակչության վերաբերյալ, ինչպես նաև եկեղեցու օգտին բնակչությունից հարկեր հավաքելու[8]:

Բուլղարական բուրժուազիան հունական պայքարի դեմ ընդգրկեց լայն զանգվածների՝ առաջ քաշելով մշակութաազգային ինքնավարության լոզունգներ Օսմանյան կայսրության տարածքում: Դ. Բլագոևը[9] գրում է. «եկեղեցական պայքարը ոչ միայն ազգային քաղաքական պայքար էր, որի նպատակն էր ճանաչել բուլղարական ազգայնականությունը Թուրքիայում, այև պայքար, որում կներառվեր ողջ ազգը, ողջ բուլղարական ազգը» [10]:

Ինքնուրույն եկեղեցու համար շարժման մեջ առանձնանում էին երկու ուղղություն՝ չափավոր և արմատական: Առաջինի շարքերը համալրում էր առևտրական բուրժուազիան, որոնք իրենց կոմնորոշմամբ բաժանվում էին թուրքասիրական և ռուսասիրական զանգվածների: Նրանք սահմանափակվում էին պահանջով, որ նշանակեն հյուպատոսությունում տեղական բուլղար հոգևորականներ, արքեպիսկոպոսներ և եկեղեցական արարողությունները կատարվեն մայրենի լեզվով: Արմատական ուղղությունը, որի հա-

մակիրներն էին մանր առևտրա-արդյունաբերական բուրժուազիան, իր առջև խնդիր էր դնում ստեղծել ինքնուրույն բուլղարական եկեղեցի:

Արմատական խմբավորման ղեկավարները Կ. Պոլսի համայնքում հենվում էին սուլթանական Հաթթը հումայունի վրա, որից ելնելով էլ՝ 1856 թ. գարնանը սուլթանին տրվեցին պահանջներ բուլղարական ժողովրդի անունից: Նրանք պահանջում էին՝

1. թույլ տալ բուլղար ժողովրդին ինքնուրույն ընտրելու եկեղեցու գլխավորին, դրա մեջ չէին կարող խառնվել ոչ մուսուլմանները, ոչ էլ այլ ազգությունների պատկանող քրիստոնյաները,

2. իրավունք՝ ընտրելու գերագույն քաղաքացիական ղեկավար, որը պետք է լիներ ազգությամբ բուլղար, ով կարող էր սուլթանին առաջարկել արժանի հայրենակիցներ որպես կառավարիչներ, դատավորներ և այլ պաշտոնյաներ[11]:

Ծրագիրը, այդպիսով, նախատեսում էր ոչ միայն եկեղեցական, այլ նաև ադմինիստրատիվ ինքնավարություն:

1858 թ. Կ. Պոլսի պատրիարքությունը հավաքեց եկեղեցական ժողով, որի ժամանակ բուլղարների ներկայացուցիչները առաջ քաշեցին հետևյալ պահանջները.

1. տեղերում արքեպիսկոպոսների ու թեմերի ընտրության իրավունքը,

2. արքեպիսկոպոսների ընտրության ժամանակ հաշվի առնել ընտրվողների տեղական լեզուներին տիրապետելը,

3. բարձրագույն հոգևորականության շնորհումների հաստատումը[12]:

Բոլոր պահանջները մերժվեցին հույն հոգևորականության կողմից: Դրանից հետո եկեղեցական հարցում և՛ լիբերալ, և՛ պահպանողական ուղղության հետևորդ գործիչները որոշեցին խզել կապերը պատրիարքության հետ: Արդեն 1860 թ. ապրիլի 3-ին Կ. Պոլսի բուլղարական եկեղեցում պատարագի ժամանակ չհիշատակվեց պատրիարքի անունը: Դրան ի պատասխան պատրիարքը բուլղար եպիսկոպոսին բանադրանքի ենթարկեց[13]:

Բուլղարական եկեղեցու հարցը ակտիվորեն քննարկվում էր նաև հասարակական շրջանակներում: Դրա ջատագովներից էր հատկապես Գ. Ռակովսկին[14], ով իր «Дунавски лебед»[15] հանդեսում շեշտում էր եկեղեցու ինքնուրույնության անհրաժեշտությունը և գտնում էր, որ դա հարց է, որից «կախված է բուլղարական ժողովրդի լինել չլինելը»[16]:

Այս ամենի շուրջ հակառակ տեսակետն էր արտահայտում Լյուբեն Կարավելովը[17], ով գտնում էր, որ ազգային եկեղեցու ստեղծումով ազգային ազատագրության հնարավոր չէ հասնել, և դա պայքարի ճանապարհ չէ:

1860 թ. դեկտեմբերի 18-ին բուլղարները մեծ խմբով Դ. Ցանկովի ղեկավարությամբ մեկնեցին Կ. Պոլիս: Այցի նպատակն էր արքեպիսկոպոս Բրունոնին հանձնել խնդրագիր՝ ուղղված պապին, որով խնդրում էին վերականգնել բուլղարական ինքնուրույն եկեղեցին Հռոմի պապի գլխավորությամբ: Փաստաթուղթը ստորագրեցին հինգ հոգևոր ներկայացուցիչներ ու 180 արհեստավորներ[18]: Միևնույն ժամանակ պայման էր դրվում պահպանել ուղղափառ ծեսերն ու կանոնները[19]: Պիոս 9-րդ պապը տվեց դրական պատասխան և 1861 թ. ապրիլի 8-ին Հռոմում ձեռնադրեց նախկին հայդուկ, կիսագրագետ Իոսիֆ Սակոլովսկուն «Համայն Բուլղարիայի պատրիարք»[20]: Վերջինս շուտով ոչ միայն հեռացավ ունիայից, այլ նաև նույն թվականի ամռանը փախավ Ռուսաստան՝ իր հետ տանելով պապական հրովարտակը, որպեսզի Բարձր դուռը նրան հաստատի այդ պաշտոնում[21]: Ունիայի դեմ արտահայտվեց նաև Գ. Ս. Ռակովսկին՝ դատապարտելով Դ. Ցանկովի և ունիայի այլ կողմնակիցների գործունեությունը: Նա հայտարարեց, որ չգնան ոչ մի փոխզիջման պատրիարքության կամ Հռոմի

հետ, հաշվի չառնեն դրսից որևիցե օգնություն և ձգտեն սեփական ուժերով հասնելու ազգային եկեղեցի ունենալու իրենց իրավունքի իրականացմանը[22]:

Պայքարին հարող արտադրողներն ու մանր առևտրականները ունիան դիտարկում էին որպես քաղաքական մանևր, որի օգնությամբ փորձում էին հասնել հունական պատրիարքության զիջումներին և ազդել ռուսական դիվանագիտության վրա՝ ուշադրություն գրավելով եկեղեցա-ազգային շարժման վրա:

Համոզվելով, որ ունիան ոչ միայն բարդացնում, այլ նաև սպառնում էր էլ ավելի վատ հետևանքների հանգեցնել բուլղարական եկեղեցական հարցը և բուլղար ժողովրդին՝ նրանք սկսեցին հեռանալ ունիային կողմ լինելու շարժումից: Ունիայի դեմ պայքարին մեծամասամբ նպաստեց նաև ռուսական կողմը, որն այն համարում էր զենք իր հակառակորդների ձեռքին[23]: Համեմատական պարզությունը, որով հաջողության հասան ունիայի դեմ պայքարում, կարելի է մեկնաբանել նրանով, որ վերջիններս, չունենալով սոցիալական ամրություն և հենարան, պառակտվեցին հենց ներսից:

Բուլղարական եկեղեցական խնդրով անհանգստացած էին նաև Մեծ տերությունները: Ռուսաստանը, լինելով ուղղափառ եկեղեցու հովանավոր, ստիպված էր ընտրություն կատարելու երկու ուղղափառ ժողովուրդների միջև: Կաթոլիկական միսիոներները, որոնց հետևում կանգնած էին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները, քարոզում էին բողոքականություն և կաթոլիկություն ու համոզում, որ միայն Հռոմի պապի և եվրոպական կաթոլիկ երկրների օգնությամբ կարելի է ազատագրվել և ինքնուրույնություն ստանալ Կոստանդնուպոլսի պատրիարքությունից: Ռուսական հյուպատոսը Վառնայում նշում էր, որ չցանկանալով «ոչ փող, ոչ ինտրիգ»՝ Ֆրանսիան կաթոլիկ հոգևորականների օգնությամբ, իսկ Անգլիան՝ միսիոներների միջոցով, ձգտում էին մտցնել բուլղարների մեջ Ռուսաստանի նկատմամբ անվստահություն[24]:

Պետերբուրգյան կաբինետը տեսնում էր եկեղեցական աճող կոնֆլիկտի քաղաքական ենթատեքստը: Ռուսական արտաքին քաղաքականության գլխավոր ներկայացուցիչ Լ. Մ. Գորչակովը շեշտում էր, որ թուրքական կառավարությունը մեծացնում է Կոստանդնուպոլսի պատրիարքության դիրքերը, որպեսզի «մեծացնի անդունդը ուղղափառ ժողովուրդների և վերացնի Բուլղարիայում ազգային աստիճանակարգության հաստատումը, որն անմիջականորեն նպաստում է երկրի քաղաքացիական զարգացմանը»[25]: Նա շեշտում էր, որ այդպիսի քաղաքականությամբ Բարձր դուռը փորձում է հասնել երկու նպատակների իրականացման՝ բուլղարների մի մասի մտնելը ունիայի մեջ, որով կթուլանա նաև Ռուսաստանի ազդեցությունը նրանց վրա, և մյուս մասի վրա կմեծանա հունական պատրիարքության ազդեցությունը, «որը մշտապես հանդիսացել է թուրքական իշխանությունների հավատարիմ մասը ուղղափառների մեջ»26]:

Ռուսաստանի դիվանագիտական ուղղվածության կենտրոնացվածությունը բուլղարների եկեղեցական խնդրում բխում էր տիրող հասարակական-քաղաքական տրամադրություններից: Պետերբուրգյան դիվանագիտությունը սկսած 1860 թվականից համառորեն ձգտում էր ազդելու Կոստանդնուպոլսի պատրիարքության վրա և համոզելու նրան գնալ անհրաժեշտ զիջումների բուլղար ժողովրդի արդար պահանջների նկատմամբ:

1861 թ. սկզբին ռուսական կառավարող շրջաններում գոյություն ունեին երկու տարբեր տեսակետներ բուլղար ժողովրդի ինքնուրույն եկեղեցի ունենալու հարցում: Ալեքսանդր 2-րդը, Ա. Մ. Գորչակովը, մետրոպոլիտ Ֆիլարետը և ռուսական դիվանագետների ազդեցիկ խմբավորումը դեմ չէին ստեղծելու ինքնուրույն բուլղարական եկեղեցի[27]: Գոյություն ուներ նաև հունամետ ուղղությունը, որը ներկայացված էր սինոդի որոշ անդամներով և ռուսական դիվանագիտության որոշ ներկայացուցիչներով: Հաշվի առնե-

լով, որ ռուսական ավանդական քաղաքականությունը տվյալ ժամանակահատվածում Բալկաններում չէր գործում՝ հունասերները իրենց քաղաքականության արդյունքն էին տեսնում՝ պահպանել իրենց իշխանությունը և Կոստանդնուպոլսի պատրիարքության միասնությունը:

Ճանաչելով բուլղարների իրավունքները ուղղափառ եկեղեցի ունենալու հարցում, հասկանալով այդ շարժման քաղաքական ուղղվածությունը, տալով հոգևոր և ֆինանսական օգնություն՝ բուլղարական ազգային ինքնահաստատման համար՝ Ռուսաստանի կառավարությունը պահանջում էր իր դիվանագետներից հաշտեցնել բուլղարական և հունական վեճը: Ռուսական կողմը գտնում էր, որ եկեղեցական վեճը բուլղարների ու հույների միջև կթուլացնի նրանց դիրքերը Բալկաններում, որից կօգտվեն թուրքերը[28]: Մի կողմից՝ ռուսները ուղղորդում էին հունական հոգևորականությանը Կոստանդնուպոլսի պատրիարքի ղեկավարությամբ բավարարելու բուլղարների պահանջները, իսկ մյուս կողմից՝ համոզելու մյուս կողմին առնվազն նոմինալ ճանաչել հունական պատրիարքության գերագահությունը:

Ռուս խոշոր դիվանագետ Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկին համոզում էր Կ. Պոլսի պատրիարք Իոահիմ 2-ին գնալ զիջումների բուլղարների նկատմամբ: Շեշտվում էր, որ իրենց պահվածքով նրանք օգնում են Բարձր դռանը օգտագործելու հունա-բուլղարական ճգնաժամը իրենց իշխանության ամրապնդման համար, ինչպես նաև հավելում, թե ինչ տեղի կունենա, երբ բոլոր ազգերը միավորվեն[29]:

Ռուսական դեսպանի բոլոր գործողությունները Կ. Պոլսում հանդիպում էին համառ դիմադրության և հաջողություն չէին ունենում պատրիարքի մոտ: Բուլղարական շարժման արմատական կողմնակիցները, որոնց հետևից գնում էին ժողովրդական զանգվածները, չէին ցանկանում հեռանալ իրենց պահանջներից, որն էր հունական պատրիարքությունից բուլղարական եկեղեցու ամբողջական անկախությունը:

Փորձը՝ իրականացնել «միջին քաղաքականություն», հաշտեցնել անհաշտելին, ստեղծում էր լավ հիմք արևմտյան դիվանագիտության, առաջին հերթին Մեծ Բրիտանիայի համար, որը ռուսական քաղաքականության ամենահետևողական ընդդիմադիրն էր Բալկաններում:

1860 թ. ապրիլի 3-ի բուլղարական ակցիայից հետո բուլղարա-հունական եկեղեցա-ազգային հակամարտության հետաքրքրությունը անգլիական դիվանագիտության մոտ կտրուկ աճեց: Կ. Պոլսում անգլիական դեսպան Հենրի Բուլվերը իր ձեռքը վերցրեց բուլղարական համայնքի ղեկավարների տվյալները: Նա կապեր հաստատեց Կ. Պոլսում թուրքասիրական կողմնորոշում ունեցող գործիչների հետ և միաժամանակ ակտիվորեն հետևում էր բուլղարական պրովինցիաներում եկեղեցական-ազգային շարժման ծավալմանը:

Լոնդոնյան դիվանագիտությունը, որն անհանգստացած էր առաջին հերթին պահպանելու ստատուս-քվոն Հարավ-արևմտյան Եվրոպայում, եկավ այն եզրակացության, որ քաղաքականապես ազատագրվելու բուլղարների ձգտումները հնարավոր է լուծել՝ տալով եկեղեցուն ինքնավարություն: Սուլթանական կառավարության այդպիսի որոշումը կհաներ բուլղարներին ռուսական ազդեցությունից: Այս գաղափարին միացան նաև ավստրիական կառավարության ներկայացուցիչները՝ գտնելով, որ եկեղեցական հարցի լուծումը կհանի բուլղարների օրակարգից ազգային ազատագրության հարցը:

1864 թ., երբ Ն. Պ. Իգնատևը նշանակվեց ռուսական պատվիրակության ղեկավար Թուրքիայում: Բուլղարահունական եկեղեցա-ազգային կոնֆլիկտը հիմնական նպատակ համարելով՝ դեսպանը անցավ բուլղարների կողմը և սկսեց ավելի եռանդուն

ազդել ինչպես պատրիարքի, այնպես էլ Բարձր դռան վրա՝ փորձելով հասնել բուլղարական պահանջների լուծմանը:

Այսպիսով՝ տեղի ունեցավ հետաքրքիր իրադարձություն. փորձելով դուրս բերել մեկին մյուսի դեմ՝ և՛ անգլիական, և՛ ռուսական կառավարություններն սկսեցին պայքարել բուլղարական ինքնուրույն եկեղեցի ունենալու համար:

Բալկաններում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք նպաստեցին եկեղեցական հարցի լուծման գործընթացի արագացմանը: Նախ Կրետեում սկսվեց ապստամբություն, որը պաշտպանեց հունական կառավարությունը: Սերբերի նախաձեռնությամբ փորձ էր կատարվում ստեղծել բալկանյան համընդհանուր ճակատ ընդդեմ Թուրքիայի, որը հավանության արժանացավ նաև հունական կողմից: Սա կատարվում էր ռուսական անմիջական հովանավորությամբ, որի հետևանքով հունական կառավարությունը սկսեց մտերմանալ ռուսական իշխանությունների հետ: Այս ամենն իր արտահայտությունը գտավ նաև եկեղեցական հարցում: 1867 թ. նոր պատրիարք Գրիգորի 6-րդը առաջարկեց ստեղծել Հյուսիսային Բուլղարիայի ավտոկեֆալ (ինքնագլուխ) [30] էկզարխատությունը, որը պետք է ենթարկվեր պատրիարքին[31]:

Հարկ է նշել, որ կոնֆլիկտի լուծումը չէր մտնում թուրքական կառավարության ծրագրերի մեջ: Օսմանյան կայսրությունը փորձում էր ստեղծված վիճակն օգտագործել երկու ազգերի միջև թշնամանքն էլ ավելի խորացնելու համար՝ միաժամանակ թուլացնելով նրանց դիրքերը: Դրան հասնելու համար թուրքական իշխանությունները հայտարարեցին, որ բուլղարներին կտրվի անկախ եկեղեցի ստեղծելու հնարավորություն: Այս առաջարկը բուլղարների եկեղեցական գործերով զբաղվող գործիչներին բաժանեց երկու մասի: Առաջին խումբը, որը տնտեսապես և քաղաքականապես հակված էր դեպի Ռուսաստանը՝ Գ.Կրիստևիչի ղեկավարությամբ համաձայն էր պատրիարքի առաջարկության հետ: Մյուս խումբը, որը ղեկավարում էր թուրքասեր Ս. Չոմակովը հանդես եկավ Բարձր դռան առաջարկի օգտին[32]: Փաստորեն հայտարարությունը պառակտեց ուժերը և տարավ նրան, որ պատրիարքի առաջարկը մերժվեց:

Սակայն վճռական ազդեցություն այս գործի վրա ունեցավ 1867-1868 թթ. բուլղարական ազգային-ազատագրական պայքարը: Թուրքական կառավարող շրջաններում անհանգստություն առաջացրեց նաև Բուլղարիայում Հաջի Դիմիտրովի և Ստեֆան Կարաջիի ղեկավարությամբ զինված պայքարի առաջ գալը: Հաշվի առնելով, որ քաղաքական անկախության համար հեղափոխական պայքարը բուլղարական ժողովրդի մոտ կընդունի ավելի մեծ ծավալներ՝ Բարձր դուռը 1870 թ. փետրվարի 28-ին հրապարակեց ֆերման, որով ստեղծվում էր ինքնուրույն «բուլղարական էկզարխատություն»: Բուլղարական եկեղեցու ղեկավար՝ էկզարխը պետք է ընտրվեր և հաստատվեր բուլղարական Սինոդի ու պատրիարքի կողմից: Էզարխատության տարածքը սահմանվում էր ավելի լայն, քան Գրիգորի 6-րդի սահմանվածն էր: Բացի Մերձդանուբյան Բուլղարիայից նրա կազմի մեջ մտնում էին նաև երկու թեմեր, որոնք ներառում էին ոչ միայն բուլղարական, այլև սերբական բնակչություն (Նիշում և Պիրոտում), ինչպես նաև Հարավային Բուլղարիան և Մակեդոնիայի մի մասը: Սահմանվում էր նաև, որ այդ սահմաններից դուրս մնացած տարածքները բնակչության 2/3-ի ցանկությամբ հնարավոր էր ևս միացնել էկզարխատությանը[33]:

Սա ժողովրդի շրջանում բերեց մեծ ոգևորություն: Կ. Պոլսում որպես Բուլղարական եկեղեցու վերականգման բարձրագույն մարմին ստեղծվեց ժամանակավոր եկեղեցական խորհուրդ՝ կազմված բուլղար արքեպիսկոպոսներից և աշխարհիկ գործիչներից[34]:

Անգամ սուլթանական ֆերմանի հրապարակումից հետո Կ. Պոլսի պատրիարքությունը չնահանջեց իր դիրքերից ու էլ ավելի թշնամական դիրք գրավեց բուլղար հոգևորականության նկատմամբ:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու մի շարք փորձեր կատարվեցին՝ կոտրելու հույն հոգևորականության ճնշումները, սակայն վճռական դարձան այս խնդրում 1872 թ. հունվարի 5-ի իրադարձությունները, երբ մետրոպոլիտներին բերեցին բուլղարական եկեղեցի ու ստիպեցին եկեղեցական ծես կատարելու Աստվածահայտնության տոնի առթիվ, թեև պատրիարքն արգելել էր դա անել[35]: Այդ իրադարձությունները դիտելու համար հավաքված բազմությունը այնուհետև դուրս եկավ Կ. Պոլսի փողոցներ և ուղևորվեց Մեծ վեզիրի նստավայր՝ պահանջելով մետրոպոլիտներին տալ ազատություն:

1872 թ. հունվարի 5-ի իրադարձությունները բերեցին պատրիարքության հետ կապերի լրիվ խզման: Արդեն փետրվարի 16-ին ընտրվեց առաջին էկզարխը՝ Անտեմ 1-ինը:

Դրանով ավարտվեց բուլղարական ինքնուրույն եկեղեցու համար պայքարը, որ մղում էին բուլղար եկեղեցու առաջնորդները, բուլղարական հասարակության տարբեր շերտերը: Հարկ է նշել նաև օտար պետությունների շահագրգռությունը այս խնդրում, որոնք առիթը բաց չթողեցին Օսմանյան կայսրության ներքին գործերին խառնվելուց և խնդիրն իրենց շահերին ծառայեցնելուց:

Այսպիսով՝ ազատվելով հունական եկեղեցու ճնշումներից ու հարստահարություններից բուլղարական ինքնուրույն եկեղեցին իրականություն դարձավ: Բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը կենտրոնացավ միայն թուրքական կառավարության դեմ գործողություններում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆանարիոտները հույն ազնվականական խավ էին, որոնք հաստատվել էին 17-20-րդ դդ. Օսմանյան կայսրությունում Կ. Պոլսի մոտակա Ֆանար բնակավայրում և ունեին մտերիմ հարաբերություններ տեղի հունական պատրիարքության հետ: 17-րդ դ. սկսած ֆանարիոտները կազմել են կառավարող խավի մի մասը Դանուբյան իշխանություններում: Panayotis A. Papachuristou, The three faces of the phanariots: An inquiry into the role and motivations of the Greek nobility under Ottoman rule, 1683-1821, Canada, 1992, pp. 5-26.
2. Տե՛ս Международные отношения на Балканах 1856-1878 гг., М., 1986, стр. 138.
3. Տե՛ս Бойкикева К., Болгарская православная церковь, София, 2005, стр. 139.
4. Տե՛ս Ներսիսյան Ա., Բուլղար ժողովրդի պայքարը Սուլթանական Թուրքիայի դեմ 19-րդ դարի 70-ական թթ., Եր., 1978, էջ 11:
5. Անտոնյան Ա., Ընդարձակ պատմություն Պալկանյան պատերազմեն, Կ. Պոլիս, 1912, էջ 146:
6. Косев Д., Новая история Болгарии, София, 1951, стр. 250.
7. Այդ պատմաբաններն են Դ. Կոսևը, Զ. Մարկովան և այլն:
8. Տե՛ս Ներսիսյան Ա., նշվ. աշխ.:
9. Դմիտրի Բլագոևը (1856-1924 թթ.) համարվում է բուլղար խոշորագույն քաղաքական գործիչ: Նրան է վերագրվում մարքսիստական գաղափարների տարածումը Բուլղարիայում:
10. Благоев Д., Очерки истории социализма в Болгарии, М., 1989, стр. 22.

11. Տե՛ս Косев Д., նշվ. աշխ., էջ 251:
12. Տե՛ս История Болгарии, Т.1, М., 1954, стр. 259.
13. Տե՛ս նույն տեղում:
14. Գեորգի Ռակովսկին (1821-1867 թթ.) Բուլղարիայի ազգային-ազատագրական պայքարի խոշորագույն ներկայացուցիչներից է: 1853 թ. փորձ է արել Բուլղարիայում կազմակերպել հակաթուրքական ապստամբություն: 1854 թ. ղեկավարել է ապստամբների ջոկատ Մտարա Պլանինայում: 1861-1862 թթ. Բելգրադում կազմակերպել է առաջին Բուլղարական լեգիան (զորամիավորում): 1866 թ. վերջին Բուխարեստում միավորել է չետնիկ վոյեվոդաներին՝ Բուլղարիան օսմանյան լծից ազատագրելու նպատակով ծրագրված գործողություններ մղելու համար: Կազմել է «Անտառային ժողովրդական ջոկատների ժամանակավոր օրենք (1867 թ.)», որտեղ արտահայտել է չետնիկներին կենտրոնացված ռազմական կազմակերպության վերածելու միտքը: Առաջ է քաշել ազատագրական պայքարում բալկանյան ժողովուրդների եղբայրական համերաշխության գաղափարը:
15. “Дунавски лебед”-ը հրատարակվել է Բելգրադում 1860 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1861 թ. դեկտեմբերի 24-ը Գ. Ռակովսկու ջանքերով: Թերթում արտահայտվել են Գ. Ռակովսկու հիմնական գաղափարները և համարվել է հեղափոխական հիմնական թերթը տվյալ ժամանակահատվածում:
16. Տե՛ս История Болгарии, նշվ. աշխ., էջ 265:
17. Լյուբեն Կարավելովը (1834-1879 թթ.) խոշորագույն բուլղար հասարակական-քաղաքական գործիչ էր: 1857-1866 թթ. ապրել է Մոսկվայում, համակվել հեղափոխական դեմոկրատներ Գերցենի, Չեռնիշևսկու, Դոբրոլյուբովի առաջավոր գաղափարներով: 1869 թ. դարձել է Բուլղարական հեղափոխական կենտրոնական կոմիտեի անդամ, 1872 թ՝ նախագահը: Հրատարակել է «Свобода» (1869-1872 թթ.) և «Независимость» (1873-1874 թթ.) թերթերը: Օսմանյան լծից ազգային ազատագրության միակ ուղին համարել է ժողովրդական հեղափոխությունը: 1873 թ. Վ. Լևսկու մահապատժից խորապես ցնցված, սկսել է զբաղվել սոսկ լուսավորական գործունեությամբ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բուլղարիա է վերադարձել որպես ռուս բանակի գլխավոր հրամանատարության (շտաբի) թարգմանիչ, ողջունել է հայրենիքի ազատագրումը:
18. Տե՛ս Бойкикева К., նշվ. աշխ., էջ 143:
19. Տե՛ս Международные отношения на Балканах 1856-1878 гг., նշվ. աշխ., էջ 140-141:
20. Տե՛ս Бойкикева К., նշվ. աշխ., էջ 137:
21. Տե՛ս Международные отношения на Балканах 1856-1878 гг., նշվ. աշխ., էջ 141:
22. Տե՛ս նույն տեղում:
23. Տե՛ս նույն տեղում:
24. Տե՛ս նույն տեղում, էջ 140:
25. Նույն տեղում:
26. Նույն տեղում:
27. Տե՛ս նույն տեղում, էջ 141:
28. Տե՛ս История Болгарии, նշվ. աշխ., էջ 259:
29. Տե՛ս Международные отношения на Балканах 1856-1878 гг., նշվ. աշխ., էջ 142:
30. IX–XI դդ-ից սկսած կազմավորվել են ինքնագլուխ (ավտոկեֆալ) երկաբնակ եկեղեցիներ (Վրաց եկեղեցին՝ ավելի վաղ), որոնք միավորվում են Ուղղափառ (Արևելյան երկաբնակ) եկեղեցիներ անվան տակ: Դրանք են՝ նախ՝ բյուզանդա-

կան շրջանի հին պատրիարքությունները՝ Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի (Դամասկոսում, Սիրիա), Երուսաղեմի աթոռները, ապա՝ Մոսկվայի (Ռուս ուղղափառ եկեղեցի), Սերբիայի, Բուլղարիայի, Ռումինիայի պատրիարքությունները, հուն. եկեղեցիները՝ Հելլադայի (Հունաստանի), Կիպրոսի, Սինայի, Վրաց, Ալբանիայի, Ֆինլանդիայի, Չեխիայի, Սլովակիայի, Լեհաստանի, Ճապոնիայի, ինչպես նաև Աֆրիկայի, ԱՄՆ-ի ուղղափառ եկեղեցիները: Դրանք բոլորն էլ առաջնորդվում են նույն նվիրապետական աստիճանակարգով (եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ):

31. Տե՛ս История Болгарии, նշվ. աշխ., էջ 259:
32. Տե՛ս նույն տեղում, էջ 260:
33. Տե՛ս նույն տեղում:
34. Տե՛ս Бойкикева К., նշվ. աշխ., էջ 137:
35. Տե՛ս Косев Д., նշվ. աշխ., էջ 275:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բուլղարական ինքնուրույն եկեղեցու համար պայքարը Օսմանյան կայսրությունում

Հայկ Մխոյան

Հոդվածում անդրադարձ է կատարվել 19-րդ դարի 50-70-ական թթ. Բալկանյան թերակղզում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից՝ բուլղարների ազգային եկեղեցի ունենալու պայքարին: Բուլղարների այս պայքարն ուղղված էր հունական պատրիարքության դեմ, որն անընդհատ ճնշումների էր ենթարկում բուլղար ազգաբնակչությանը: Հակամարտության կարևորագույն կողմերից էր նաև Օսմանյան կայսրությունը, որի տարածքում էլ տեղի էին ունենում նշյալ իրադարձությունները: Ի վերջո խնդիրը լուծվեց հօգուտ բուլղարական եկեղեցու: 1870 թ. ստեղծվեց բուլղարական ինքնուրույն էկզարխատություն, որը ճանաչվեց Օսմանյան սուլթանի կողմից ու, թեև առաջացրեց Կոստանդնուպոլսի հունական պատրիարքության դժգոհությունը, այնուամենայնիվ այն ստիպված եղավ ընդունել տեղի ունեցած փաստը:

РЕЗЮМЕ

Борьба за создание самостоятельной болгарской церкви в Османской империи

Гайк Мхоян

Ключевые слова: *Болгарская православная церковь, Болгарский экзархат, Османская империя, Россия, Фанариот, Вселенский патриархат Константинополя*

В статье отображено одно из событий, произошедших на Балканском полуострове в 50-70-х годах XIX века, которое касается борьбы болгар за национальную церковь. Эта борьба болгар была направлена против греческого патриаршества, которое подвергало постоянным угнетениям болгарское население. Одной из важнейших сторон конфликта была также Османская империя, на территории которой имели место данные события. В конце концов, вопрос был решен в пользу болгарской церкви. В 1870 г. был создан самостоятельный Болгарский экзархат, который был признан османским султаном, и, несмотря на то, что оно породило недовольство греческого патриаршества, всё же оно было вынуждено принять состоявшийся факт.

SUMMARY

The Struggle for a Separate Bulgarian Church in the Ottoman Empire

Hayk Mkhoyan

Keywords: *Bulgarian Orthodox Church, Bulgarian Exarchate, Ottoman Empire, Russia, Phanariot clergy, Ecumenical Patriarchate of Constantinople.*

The present article touches upon one of the most important events of the 50's and 70's of the 19th century which took place in the Balkan Peninsula. It concerns the struggle of the Bulgarians for recognition of their national church. This struggle was against the Greek Patriarchate, which constantly exerted pressure on the Bulgarian population. One of the most important parties involved in the conflict was the Ottoman Empire, in the area of which these events took place. Eventually the problem was solved in favor of the Bulgarian Church. In 1870 Bulgaria established its own Exarchate, which was recognized by the Ottoman sultan. Though it aroused resentment of the Greek Patriarchate in Constantinople, the latter, however, was forced to accept the fact.